ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

Արդյունաբերությունը ազգային տնտեսության, ինչպես նաև համաշխարհային տնտեսության արտադրության առաջատար ճյուղն է: Արդյունաբերության բաժինը համաշխարհային տնտեսության կառուցվածքում ամենամեծն է (60%): Արդյունաբերության բաժինը նշված միջինից շատ ցածր է զարգացող և հատկապես ցածր է Աֆրիկայի զարգացող երկրներում:

Արդյունաբերությունը սկզբնապես ձևավորվել է Արևմտյան Եվրոպայի երկրներում ու թռիչքաձև զարգացել է արդյունաբերական հեղաշրջման ժամանակաշրջանում, երբ ներդրվեցին շոգեմեքենան, տարբեր տեսակի հաստոցները և այլն: Ավելի ուշ արդյունաբերությունն աստիճանաբար տարածվեց աշխարհի բոլոր երկրներում: Այդուհանդերձ ներկայումս էլ արդյունաբերական ձեռնարկությունների ու կենտրոնների մեծ մասը տեղաբաշխված է զարգացած երկրներում (քարտեզասխեմա ...):

Արդյունաբերական ձեռնարկություններում իրականացվող արտադրական գործընթացում բնական նյութական ռեսուրսներից կամ գյուղատնտեսության արտադրանքից պատրաստվում են արդյունաբերական զանազան ապրանքներ: Արդյունաբերությունը զբաղվում է ոչ միայն հումքի արդյունահանմամբ ու մշակմամբ, այլ նաև՝ էներգիայի տարբեր տեսակների փոխակերպմամբ: Այսպես օրինակ՝ էլեկտրակայաններում վառելիքի կամ երկրի ընդերքի ջերմությունը, ինչպես նաև ջրի գրավիտացիոն և այլ էներգիաները փոխակերպվում են էլեկտրական էներգիայի:

Արդյունաբերության արտադրանքի մի մասը (օրինակ՝ հաստոցը՝ հացահատիկահավաք կոմբայնը) օգտագործվում է որպես հետագա արտադրության միջոց, իսկ մյուս մասը (օրինակ՝ պարենը, հագուսը, կոշիկը)՝ որպես մարդկանց անմիջական սպառման առարկա: Ավելի մեծ խումբ են կազմում այն ճյուղերը, որոնց արտադրանքը հիմնականում ծառայում է որպես արտադրության միջոց: Այդ ճյուղերի ամբողջությունը կոչվում է **ծանր արդյունաբերություն**: Իսկ արդյունաբերությոն ճյուղերի փոքր խումբը ներառում է միայն **թեթև** և **սննդի արդյունաբերությունը**:

Բացի նշվածից՝ առանձնանում են նաև **արդյունահանող** և **մշակող** արդյունաբերական ճյուղերի խմբեր: **Արդյունահանող արդյունաբերությունը** ներառում է այն ճյուղերը, որոնք զբաղվում են Երկրի ընդերքից, ջրից և անտառներից տարբեր տեսակի հումքի կամ վառելիքի հանույթով:

Մշակող արդյունաբերությունը ներառում է այն ճյուղերը, որոնք զբաղվում են հումքի մշակմամբ կամ վերամշակմամբ: Ընդ որում՝ հումքն ստացվում է ոչ միայն արդյունահանող արդյունաբերության, այլ նաև՝ գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության բնագավառներում:

Երկրի արդյունաբերական զարգացման մակարդակի գնահատման համար առավել բնութագրական է արդյունաբերության ընդհանուր (համախառն) արտադրանքի մեջ մշակող արդյունաբերության ճյուղերի բաժինը (տեսակարար կշիռը): Մշակող արդյունաբերության բաժինը շատ մեծ է զարգացած երկրներում, իսկ արդյունահանող արդյունաբերության բաժինը՝ ընդհակառակը, մեծ է զարգացող երկրներում (բացառությամբ հանքային ռեսուրսներով արտակարգ հարուստ՝ զարգացած որոշ երկրների, օրինակ՝ Ավստրալիայի ու Կանադայի):

Արդյունաբերության արտադրանքի ծավալն ավելի արագորեն է աճում, քան նյութական արտադրության այլ ճյուղերինը: Դա բացատրվում է արդյունաբերության հումքային մեծ հնարավորություններով, մինչդեռ գյուղատնտեսության զարգացման հնարավորությունը սահմանափակված է հողային ֆոնդով:

Արդյունաբերության ճյուղերը խմբավորում են նաև ըստ դրանց ձևավորման ժամանակի: Առանձնացվում են **հին**, **նոր** և **նորագույն** ճյուղեր: Հին ճյուղեր են, օրինակ՝ մետաղաձուլությունը և թեթև արդյունաբերությունը, իսկ նոր ճյուղեր են էլեկտրաէներգետիկան, մեքենաշինության ճյուղերի մեծ մասը և քիմիան:

Սկսած XX դարի վերջից առավել արագ աճում են նորագույն ճյուղերի՝ հաշվողական տեխնիկայի, միկրոէլեկտրոնիկայի, ռոբոտաշինության, տիեզերական հրթիռաշինության արտադրությունները: Իսկ մինչև XX դարի կեսերն արագ զարգացմամբ աչքի են ընկել նոր ճյուղերը՝ ավտոմեքենաշինությունը, թեթև գունավոր մետաղների ձուլումը, պլաստմասսաների, քիմիական թելերի ու երկաթաքարի արդյունահանման, սև մետաղաձուլության, նավաշինության, երկաթուղային մեքենաշինության, տեքստիլ արդյունաբերության արտադրանքի ծավալը:

Արդյունաբերության հին ճյուղերը դանդաղորեն աճելու, ինչպես նաև՝ նոր ճյուղերի ձևավորման ու արագ աճի հետևանքով փոփոխվում է արդյունաբերության ճյուղային կառուցվածքը: Մեծանում է նոր և հատկապես նորագույն ճյուղերի մասնաբաժինը և, ընդհակառակը՝ փոքրանում է հին ճյուղերի մասնաբաժինը: Սակայն այդ ճյուղերը հավասարաչափորեն չեն զարգացած ու տեղաբաշխված տարբեր տիպի երկրներում:

Նորագույն՝ բարձր տեխնոլոգիական արտադրանք արտադրող ճյուղերը, հիմնականում, կենտրոնացված են բարձր զարգացած երկրներում, իսկ հին ճյուղերը՝ զարգացող երկրներում:

Վերջին տասնամյակներում զարգացող երկրներում են տեղաբաշխվում նաև զարգացած երկրներից «դուրս մղվող» էկոլոգիապես «անմաքուր» արտադրությունները, օրինակ՝ քիմիականը և մետաղաձուլականը: